

H. PALAKACHIAN, Directeur - Rédacteur
de la Revue Hebdomad. „MÉGHOU“,
171, Rue Kabristan, Péra, CONSTANTINOPLE

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա՝ տարեկան 250, Վեցամսեայ 125 դր:
Եւրոպա՝ — 60 ֆրանք.
Ամերիկա՝ — 3 Զոլար.

Ա. ՏԱՐԻ

Թիւ 12

1927

ՕԳՈՍ. 18

Հասք 5 դրու.

مِغْهُو

صاحب و مدير مسئول هوونان پالاقشيان

استانبول بك اوغلي قبرستان سوقاق تومرو ۱۷۱

Ursoliansky, Ismaelovskiy. Sforzini

3. 9. ԲԱԼԱԳԱՇԵԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, Բերա, Գալաթիական փողոց, թիւ 171

ԾԱՆՈՒՅՈՒՄ

Տողը 10 դրու.

Չսպասած գրու-
թիւն՝ չեն վերա-
դարձուիր:

Հասք 5 դրու.



Կը հրատարակուի ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍՆԱԽՈՒՄԲԵՐՆ

Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան Օժանդակ Մասնախումբերու կազմութիւնը թաղերու մէջ՝ լաւ յղացուած գաղափար մ'էր, որուն իրականացումը բարիք միայն կրնար արժանանալ, եւ այնպէս ալ եղաւ: Զանազան թաղերու մէջ շուտով եւ դիւրութեամբ կազմուեցան Օժանդակներ, որուն անդամակցութիւնը սիրով ընդունեցին բարեւէր անձեր: Այս Մարմիններ քիչ ասեմուան մէջ կրցան Ազգիկ Տան անհրաժեշտ մէկ բանի պէտքերն հոգալ, իւրաքանչիւրն իր թաղին ազգայնոց մօտ դիմումներ ընելով եւ անոնց կամաւոր նուիրելէն ընդունելով: Բան մը զոր Հոգաբարձութիւնը չպիտի կրնար ընել ինքը միայնակ: Աշխատութեան բաժանումի սկզբունքն էր որ ի գործ կը դրուէր Օժանդակներու միջոցաւ: Ասիկայ նաեւ դիւրութիւն մը տալ էր բարի կամեցողութեան տէր մարդոց, իրենց նիւթական առաւել կամ նուազ աջակցութիւնն ընծայելու Հիւանդանոցին: Թերթերը կարելի էր նուիրատւութիւններ եւս արձանագրեցին՝ Օժանդակ Մասնախումբերու ունեցած միջոցաւ ձեռք բերուած, սովորական հանգանակութենէն անկախաբար: Ֆէրի գիւղի Մասնախումբը կրնանք ըսել թէ՛ ամենէն յաջողակը հանդիսացաւ այս նամբուն մէջ: Այս անգամ ալ Գասը գիւղի Մասնախումբն է որ մրցանիքը կը շահի՝ բարեւէր տիկինն մը 300 ոսկի փրցնելով՝ Հիւանդանոցին վառելափայտին համար:

Այսպէս ուրեմն, Օժանդակ Մասնախումբերն բարիք մը եղան Հիւանդանոցին, իրենց անձնուէր եւ պատուաւոր աշխատանքով վստահութիւն ներշնչելով Պալատի Հայ ժողովուրդին: Հոգաբարձութիւնն ինքնին, իր բոլոր բարի կամեցողութեան հակառակ, բնական է որ չպիտի կրնար Օժանդակներուն դերն ալ կատարել: Ինքն արդէն իր գործն ունի, որ է Հիւանդանոցին մասակարարական ընդհանուր հոգն եւ Հաստատութեան ներքին բարեկարգութիւնն: Օժանդակներու գործունէութիւնն սաւ մեծ օգուտն էս ունի որ անելի ժամանակ կը թողու Հոգաբարձութեան՝ իր մասնաւոր մտադրութեան եւ հոգածութեան առարկայ ընել բարեկարգութեան գործը: Դժուար, շատ դժուար գործ մ'ալ այս է թէեւ, բայց կամքին ձեռքէն բան չի փախիր: Հոգաբարձութիւնը լաւագոյն գործը կատարած պիտի ըլլայ — Օժանդակ Մասնախումբերու կազմութենէն յետոյ — Բարեկարգիչ Մասնախումբ մ'ենս կարգելով եւ պատշաճ տնային անոնք յանախակի եւ անա-

կրկնալ այցելութիւններով՝ պատշաճ եղբայրականութեան կատարման եւ ներքին մասակարարական գործառնութեանց մասին ֆննդութիւն կատարել, հակապէս ի գործ դնել, եւ իր կարելիքը դիտողութիւններն ու զեղծումներն բարձրման մասին իր առաջարկութիւնները ներկայացնել Հոգաբարձութեան, առ ի սնորհաւորութիւն: Բնականաբար, Հոգաբարձութիւնն ալ որ կ'ընդունի թէ օժտուած է ամէն բարի տրամադրութիւններով, լրջօրէն պիտի վերաբերուի եղած առաջարկութեանց եւ թելադրութեանց հանդէպ. եւ զարժանը պիտի սնորհի ու գործադրէ յօգուտ Հաստատութեան, որուն բարիքն եւ ո'չ թէ փառքի համար ստանձնած են պատշաճ: Կարելի է որ Բարեկարգիչ Մասնախումբի անդամներն ընտրուին առաւելապէս մօտակայ թաղերէն, օրինակի համար՝ Սամաթիայէն եւ Պաքրգիւղէն, որպէս զի անոնց յանախակի այցելութիւնները կարելի ըլլան:

Երբ այսպէս, Հոգաբարձութիւն, Օժանդակ Մասնախումբեր եւ Բարեկարգիչ Մասնախումբ ձեռք ձեռքի տուած, իրարու պակաս կը լրացնեն, եւ այս միաբան գործակցութենէն բարիք կը ծնի Հաստատութեան համար, բնականաբար ժողովուրդն ալ կը խանդավառուի եւ պահանջուած որ եւ է նիւթական զոհողութեան առջեւ չընկերի, տեսնելով որ Տեղապահական շրջանին գոր-

ծուած չարաւանութիւններ վերջ եւն
գսած, ելեւմոսփի տումարներ ան-
յայտ չեն ըլլար այլ եւս, գործեր,
զգե՛ղ գործեր, որոնց անմիջական
պատասխանատուն է անուոս Հաս-
տատութեան Տնօրէնութիւնը:

Քիչ մ'աւելի կամք, քիչ մ'աւե-
լի բարեկամեցողութիւն եւ քիչ մը
աւելի ջանք՝ կրնան տպար Հաստա-
տութեան մը վերածել Ազգին Տունը,
ի մեծ միտքարութիւն պատասխարե-
լոց՝ ծերերուն, հիւանդներուն, յի-
մարներուն, եւայլն: Յուսանք եւ
սպասենք:

Յ. Գ. Փ.

ԱՅ ՇՐՋԱՆԱՐԱՐՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱՆ ԿՐԹԱՐԱՆՆԵՐԷ

Գեորգ Նանիկեան, Ուստրի ֆոլիթէրնիք
հաստատութենէն: Ստացած է B. S. տիւ-
ղոսը, ինչպէս և Սալըզլըրի Մրցանակը՝
որ կը տրուի բարձրագոյն դիրքը գրաւող
վեց ուսանողներու:

Սուրեն Ռ. Գեորգեանց, Քալիֆորնիոյ
Համալսարանէն: Ծնած է Թիֆլիս 1899ին:
Անտառաբանութեան ճիւղը ընտրած է,
և այս ճիւղին վրայ չորս գիրք հրատա-
րակած է:

Յուսիկ Մերուհեան, Թարիւղեցի, Չէ-
փըլ Հիլի Նորթ Գարօլանտ Համալսա-
րանէն՝ B. S. in Medicine տիւղոսով:

Շնորհիկ Պալաեան, Մարզուանցի, Շի-
քակոյի Համալսարանէն՝ M. A. տիւղո-
սով: Մասնագէտ է՝ Լնդհ. Ազգաց Պատմու-
թեան: Պոլսոյ Աղջկանց Գօլէճէն չըջանա-
ւարտ եղած է 1921ին B. A. տիւղոսով:

Գեղամ Յ. Այվազեան, Արմաշցի, Սին-
սինաթի Գոյէն ալ Տէնիսը էն:

Կարապէտ Մարկոսեան, Խարբըղցի,
Սրմբըղիլի Բարձր. վարժարանէն:

Աղաւնի Ապալազեան, Պրուսացի: Տնր
Ֆիլաւսիֆիա ձընըրլ Հասփիքըլ, Ագուլ
ալ Նըսիկէն: Շահած է ոսկի մէտալիան
և Ֆիլատէլֆիոյ Բժշկական Համալսարա-
նի բարձրագոյն դասընթացքի մէջ տարի
մը ձրի աշակերտելու շնորհը:

Վերոնիկա Արմաղանեան, Զմիւռնիա-
ցի, Եանքիթրն Գօլէճէն: Մասնաւորապէս
աշխատած է կենսաբանութեան և քիմիա-
բանութեան: Այժմ կ'աշխատի Նիւ Եօրքի
Նահանգային առողջապահական ճիւղի քի-
միական բաժանմունքին մէջ:

Մեծ-Շուկայի մէջ ՄԵՂՈՒԻ բաժա-
նորդներէն կը խնդրուի իրենց բաժնեգիրը
խանձել Ոսկերիչ Նաշիւ Էֆ. Արչարունիի,
Մուհաֆազաճըլար փողոց թիւ 8-10:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ս. ՊԱՏՐԻԱՐԻՆ, անդրանիկ Կոնյա-
կը Ս. Աստուածածնայ Կիրակի առաւօտ
հանդիսաւորապէս կարգացուցաւ մայ-
րաքաղաքիս բոլոր եկեղեցիներուն մէջ:

— ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ Ռէճնտիէն-
եան յարկաբաժինի համար Տիար Ներսէս
Կիւլպէնկեան նուիրած է երեք սնտուկ
գործիքներ, զորս Տօք. Զաքար իրենց
տեղերը գետեղած է:

— Ազգ. Հիւանդանոցին մէջ իր ա-
մուսնոյն յիշատակին յարկաբաժին մը շի-
նուելու համար, Կալկաթայէն Տիկ. Զը-
րաճեան 450 անգլ. ոսկի նուիրել է:

«ՄԵՂՈՒ» ի Աշխատակից և Նոր Դպ-
րոցի Հիմնադիրներէն Տիար Գալուստ
Մալաթեան (Սեպուհ), չարթուս մեկնե-
ցաւ արտասահման, և այս պատճառաւ
հրաժարեցաւ Ուսումն. Խորհրդոյ անդա-
մակցութենէն և Ուսուցչաց Օգնութեան
Մատուկի Հոգաբարձութեան Ատենապետի
պաշտօնէն: Տիար և Տիկ. Մալաթեան,
Ֆիլիպէի մէջ իրենց շնորհալի աղջկան
հարսանեկան հանդէսին ներկայ գտնուե-
լէ յետոյ, որուն համար մեր խնդակցու-
թիւնները կը յայտնենք, պիտի անցնին
Պրիւսէլ, միանալու համար իրենց որդ-
ւոյն՝ Տիար Մասիս Մալաթեանի, որ կը
զբաղի ադամանդի վաճառականութեամբ:
Սեպուհ իր աշխատակցութիւնը պիտի շա-
րունակէ արտասահմանէն:

ԿիՊՐՈՍԻ մէջ նոր ԹԱՂ. Խորհրդոյ
ընտրութիւն կատարուելով, անգամ ընտ-
րուեր են Տիար Արամ Գէորգեան, Վահ-
րամ Լեւոնեան, Նազարէթ Երիկեան,
Արմենակ Ճիվէլէկեան. Յարութիւն Պօ-
ճալեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ մէջ 36 եկեղեցիներ վեա-
սուած են վերջին երկրաշարժերէն: Էջ-
միածնայ Գերագոյն Խորհուրդը արտա-
սահմանի Հայութեան կողմէն ուղղած է հան-
գանակութիւններ կատարելու, նոյն եկե-
ղեցիներու նորոգութեան համար:

ԵԳԻՊՏՈՍԻ ազգայիններէն Պ. Մուրատ
Մէօրէմէտեան յանձն առեր է 200 անգլ.
ոսկի յատկացնել Շուսէնի (Պուլկարիա)
Հայ եկեղեցիի նորոգութեան, որ անցե-
տաճեցիլ դարձած էր, այնքան որ մինչեւ
իսկ պուլկար քաղաքապետութեան ազ-
դարարութեանց տեղի տուած էր:

ՎԱՐԴԱՂԱՐԵԱՆ Կտակի տրամադրու-
թեանց համաձայն, այս տարի ևս օժիտ
պատրաստելու համար յատկացեալ գու-
մարները պիտի տրուին Սամաթիոյ, Սկիւ-
տարի երկու թաղերու. Գուղկուհնճուքի
և Գարթալի մէջ ամուսնանալիք կարօտ
աղջիկներու մէջ յարմարագոյն նկատուած-
ներուն: Թաղ. Խորհուրդները մինչև Սեպ-
23 պէտք է Յանձնաժողովին ներկայացը-
նեն Կտակին տրամադրութեանց համա-

պատասխան ամուսնանալիք կարօտ աղ-
ջիկներու ցուցակը:

ՖԷՐԻԳԻՒՂԻ Թաղ. Խորհրդոյ ընտրու-
թիւնը կատարուելով անցեալ Ուր. օր
(տես Թերթիս վերջին էջը), բացարձակ
մեծամասնութեամբ ընտրուեցան վեց ան-
ձեր, իսկ մէկ անձի ընտրութիւնը հա-
մեմատականի մնաց: Թաղ. Ժողովը նկա-
տելով որ զպրոցական և թաղային կա-
րեւոր ու ստիպողական խնդիրներ կան
կարգադրուելիք, պէտք տեսաւ մէկ կող-
մէ վաւերացնել ընտրուած վեց անդամ-
ները ու հրաւիրել զիրենք ձեռնարկելու
իրենց պաշտօնին, և միւս կողմանէ հրա-
հանել որ մէկ անգամի ընտրութիւնն ալ
տեղի ունենայ օրինաւորապէս:

ԲԵՐԱՍԻ Կալուածոց Հոգաբարձութիւ-
նը վերակազմուեցաւ հետեւեալներէն.
Տիար Մաքսուտ Նաուեան, Մհրան Օ-
հանեան, Աբրահամ Ճիւմպիւշեան, Գէորգ
Կիւրեղեան, Պաղտատար Գազանճեան եւ
Աւետիս Բէքմէլեան: Մէկ անգամ ալ
Թաղ. Խորհուրդին կողմանէ պիտի ընտ-
րուի:

ԽՆԱՄԱՍԱՐՈՒԹԻՒՆԸ, ըստ Թաղ. Ժո-
ղովոյ որոշման, իր ուրոյն զոյգութիւնը
պիտի պահէ վերակազմուելով:

ՏՕՔ. ՄԻՀՐԱՆ ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ, Նիւ
Եօրքի Պէլլիւ Հիւանդանոցին մորթային
հիւանդութեանց բաժնին պետը, որ նաեւ
կապակցութիւն ունի հինգ ուրիշ բժշկա-
կան հաստատութեանց հետ, իր մասնա-
գլխութեան մէջ կատարուած կարեւոր
յոռաջգիմութիւններն ուսումնասիրելու
համար վերջերս այցելած է Եւրոպայի կա-
րեւոր հիւանդանոցները: Տօք. Բարու-
նակեան, որ իր մասնագիտական գործե-
րով լաւ համբաւ չափած է գերմանական
բժշկական շրջանակներուն մէջ, երկրին
չափ մը կողմբէն հրաւերներ ստացած է
այցելելու գերմանական անուանի հիւան-
դանոցները, կ'ըսէ Փարիզի մէջ հրատա-
րակուող «Փարիզ Հէրըլտ» ամբիկեան օ-
րաթերթը: Տօքթօրն իր ակնով հետ այ-
ցելեր է նոս Լոնլոմ. Վիլնիւ, Փարիզ,
Յրանքֆորթ և Քոյօն, և մասնաւոր ու-
սումնասիրութեան առարկայ բերել է նոյն
տեղերու հիւանդանոցներուն գործերը իր
մասնագիտութեան վերաբերմամբ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼԻ Հիմնադիր և
մեծանուն հանդուցեալ հրապարակալի
Մաթէոս Մամուրեանի ամուսնին վերջերս
մեծեր է Յունաստանի մէջ: Ունի երկու
թարգմանութիւններ Յրանքերէնէ. «Փոք-
րիկ տղու մը յուշապէսը» և «Երկու արի
Սիրտեր»:

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

ԲԵՐԱ, ՊԱՐԵԱՄ ՓՈՂՈՑ

Քարաշէն 11 սենեակ, չրամբար,
հոր, ելեկտրականութիւն, լողարան,
եւայլն: Դիմել Փալապաշեան Գրա-
տուն:

ԲԺՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ

ՊԵՏԻ Ե ԲԹԵՆ ՇՆՁՆԵԼ . — Ընդհանրապէս տղայոց և պատանիներու քով կը տեսնուի բերնէն շնչելու գէշ եղանակը : Տեսէ՞ք սա տղան, ոգը կը կլլէ՝ չըթուէք ներք գրեթէ միշտ կիսաբաց : Իր քիթը գրեթէ բանի մը չի ծառայեր շնչառութեան մէջ : Մօտէն քննեցէ՛ք զանիկայ . բանալ տուէ՛ք բերանը, պիտի տասնէ՛ք որ ախտայնորը անկանոն լուսած և պակասաւոր են :

Գեղադրական տեսակէտով չէ որ կ'ուզենք ծանրանալ այս վիճակին վրայ, այլ այն ծանր հետեւանքներուն վրայ որ անկէ կրնան յառաջ գալ : Պակասաւոր ակնակները և ծիւրած ծնօտը կ'արգիլեն կանոնաւոր ծամելութիւնը : Երբ տղայք գէշ կը ծամեն, բաւարար կերպով չեն կարող մարսել, որով իրենց ֆիզիքական և մտաւոր զարգացումն է որ կը սուսեն : Միևնոյն տոնն, գրեթէ միշտ կը կլլեն ոգը, և ասոր համար ալ ենթակայ կ'ըլլան դժուարամարսութեան և որովայնի խիթերու :

Մէկ խօսքով, այն տղայք, որոնք բերնէն կը շնչեն, միշտ տկար և հետեւարար հիւանդութիւններու, մինչև իսկ թոքախտի ենթակայ են : Պէտք է հսկել անոնց վրայ :

Ի՞նչ բնելու է ասոր համար : Պէտք է հանել տալ այն աւելորդ գեղձերը, որոնք ռնգային փոսերուն յետաւորովը խցելով, կը դժուարացնեն շնչառութիւնը, և պէտք է ուղղել ախտայնութեան թերութիւնները : Մասնաւոր խրնամքները և յարստեւելութիւնը կը բերեն յաջողութիւն :

ԿՐԻԲԸ

ԿՐԻԲԸ բաւական մտահոգիչ հիւանդութիւն մ'է և կրնայ վտանգաւոր ըլլալ, եթէ անհոգ ըլլանք իր մասին : Ընդհանրապէս կը կարծուի թէ անձրեւոտ օդերուն մարդիկ այս հիւանդութենէն կը բռնուին : Ասիկայ սխալ է : Մշուշապատ չոր օդն է որ ամենէն աւելի կը նպաստէ անոր փոխանցումին : Արդարեւ, փոշին օդին մէջ կը թափառի և մշուշին ջուրի մասնիկներուն մէջ առկա կը մնայ : Այս փոշին լիաբուռն կը ներշնչենք մեր թոքերուն մէջ : Ընդհակառակը, երբ կ'անձրեւէ, օդը մաքուր է, վասն զի փոշիները վար կ'իջնեն և գետնին կը փակին :

Հիւանդութեանց միջոցները մեր քիթէն ու բերնէն ներս կը մտնեն մեր թոքերուն մէջ, Բերնէն պէտք չէ շնչել : Պէտք է բերանը գոց պահել ու քիթէն շնչել : Բերնէն մտած միջոցները ուղղակի շնչաստական գործարանները կ'անց-

նին և զանոնք կը վարակին : Իայց քիթը, բնութենէն այնպէս կազմուած է որ, կ'արգիլէ միջոցներուն ներս թափանցումը : Քիթն այս արգիլիչ պաշտօնը կիրարկելու կրնանք օգնել՝ իւզոտելով ռնգոնքները կամ վազրլին քսելով, մասնաւորապէս երբ մշուշապատ օդին դուրս կ'ելնենք : Իւզը և վազրլինը պաշտպանողական առաջնակարգ միջոցներ են Կրիբի միջոցովն գէմ :

ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ . — Բուսակերութիւնը, որուն հիմնադրն է, կ'ըսեն. Պիւթագորոս, որ հոգեփոխութեան կը հաւատար, զարեւու ընթացքին մէջ ունեցաւ իր բազմաթիւ հետեւորդներ :

Արդարեւ, սննդառութեան այս ձեւը անպահանջելի առաւելութիւններ ունի, և ոխալ է կարծել թէ, միւսն անհրաժեշտ է ապրելու համար : Աթենացի երիտասարդ ըմբիշները կը սնանէին ընկոյզով, թուզով, հացով և ջուր միայն կը խմէին : Մեր օրերուն, առակի կարգ անցած է տոկունութիւնը ջրնացիներուն և ստիական ուրիշ ժողովրդոց, որոնք բրինձ միայն կուտին :

Միսը անհրաժեշտ չէ՝ մարդուն բնական և առաւելագոյն առողջ վիճակը գոյացնելու համար : Եւ կրնանք բոլր թէ, մեղէն սնունդի չափազանցութիւնը պատճառն է այն բնախօսական վատթարացումին որ մարդկային ցեղին մէջ երեւան կուգայ :

Մտաւորականին համար ալ անհրաժեշտ չէ միսը : Յօսիօրը բանջարեղէններուն մէջ ալ կը գտնուի, ինչպէս ոսպերուն, ստեպլինին, լուբիային մէջ, և յիշէ՛ք Միաց որ, ի՞նչ մարդկային հանճարներ բուսակերներ եղած են Նեւոն, Վոլդէ, Միլլէ և Լամարքին, մէկ քանին միայն յիշելու համար :

Բուսակերներու երկարակեցութիւնը կատարած չի վերցնիր : Եւ ասիկայ հասկընալի է : Բուսակերները իրենց կազմաւորութեան մէջ նուազագոյն ատոմաւոր կը վերածնեն թունաւորման առիթները : Վանականներու մէջ, որոնց սնունդը առաւելապէս բուսային է և չափաւոր, կ'երեւին բազմաթիւ ծերունիներ :

Եւ բարոյականի վրայ ազդեցութիւնն է : Անհուն է :

Հոմերոս մեղի նկարագրած է վայրագութիւնը Կիկլոպներու, մասկերներ, եւ քաղցրաբարոյութիւնը Լուտոսակերներու : Որոնք լուտոսակերի բուսած ծառին տերեւները կ'ուտէին : Պէրդիօն հաստատած է՝ ոճիրներու թիւը շատ աւելի մեծ է մսակեր ժողովրդոց մէջ : Լօմպրօզօ ևս նոյն կարծիքն ունէր, և Տօքթօր Հիւշար կ'ըսէր թէ ուրիշ պատճառ չունէր ջղապա-

րութիւնը (neurasthénie), այս նորեկով հիւանդութիւնը :

Ի մի բան, կը կարծեմ որ, կ'ըսէ՛ք Տօք . Սանկրատօ, բնականոն վիճակի մէջ պտնուող մարդու մը համար յանձնարարելի է սննդակերպ մը, որուն մէջ քիչ գեր ունենայ միսը . բայց, մասնաւոր մարմնակրթանք ընողներու համար, անօգուտ է չափազանցել սակաւակերութեան և բուսակերութեան մէջ, ինչպէս կ'ընեն կրօնաւորք ինչ ինչ վանքերու մէջ :

ՕՃԱՌԸ՝ ԴԵՂ

Օճառը, զոր ամէն օր կը գործածենք մաքրութեան համար, թանկագին ծառաշուքիւններ կը մատուցանէ նաև իբր գեղձնոտանեկան բժշկութեան մէջ :

Թեքել այրուածքները դարմանելու համար, մաքուր ջուրի մէջ թրջուած ճերմակ օճառի կտորով մը չփեցէ՛ք այրած մասերը : Այս կերպով, ցաւը կ'անհետացնէք և պալարի կազմութիւնը կ'արգիլէք :

Օճառը հակաքոյն . — Արջասպով (զաճ), Ժանգով, Ժանգաջուրով (ֆեզապ) և ուրիշ զանազան թթուներով թունաւորման պարագային, անմիջապէս օճառ ջուր խմցուցէք, մէկ լիտր ջուրի մէջ 50 կրամ օճառ լուծելով :

Պզտիկ տղոց բնական պէտքը կը դիւրացնէ կոնաճեւ տաշուած օճառի կտոր մը :

ՆԱՐԻՆՁԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Նարինջը՝ կենսական նիւթերու ճարտար վերանորոգիչ մ'է : Անոր հիւթը՝ անօթի փորոնց առնելով՝ լուսագոյն դարմանն է չոր աղետապին (անթեռիք) : Պէտք է սկսիլ նարինջի մը հիւթէն, և ամէն օր մէկ նարինջ աւելցնելով, հասնիլ մինչեւ տասը նարինջի : Միանգամայն քաղցր եւ ազդու լուծիչ դեղ մ'է նարինջը, և նիւհարցնելու գերազանց յատկութիւնը ունի : Կուտակումներն արգիլելով ստամոքսին և ամբողջ մարսողական գործարանին մէջ, մաղձը վանելով, ճարպը հալցնելով, նարինջին հիւթը կը գեղեցկացնէ գէմքին գոյնը և գեւրաւորութիւն յառաջ կը բերէ :

Նարինջի կեղևով, զոր կը չորցնեն, կը պատրաստուի սքանչելի բուսաջուր (թիզան) մը՝ մարողական և փքան, միանգամայն միզաբեր :

ԾԱԽՈՒ ԳԵՏԻՆ

Ֆէրիդիւզ, Գուլուլու Պաղ Էօն ճատէսի, 282 կանգուն գետինը, որ ունի 7 կանգուն երես և 40 կանգուն խորութիւն, ծախու է : Դիմել Փալազաշեան Գրատուն, Բերա, Գապրիատան Փողոց, Թիւ 171 :

ՃԱՌԱԳԱՅԹԱԶԱՅՆԱԿԱՆ

(RADIOPHONIQUE)

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀԻՆԳԻ ԳԼԽԱՒՈՐ ԶԱՅՆԵՐ

ԱՌԱՋԻՆ. Մօսքականեմ նաւուն փոր-
ձագէտը:

ԵՐԿՐՈՐԴ. Մաօրի նաւուն փորձագէտը:

ԵՐՐՈՐԴ. Մօսքականեմ ղեկավարը:

ԶՈՐՐՈՐԴ. » ի նաւապետը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ. Մաօրիի նաւապետը:

Ա. ԶԱՅՆ. անդեմ, այսինքն առանց
խօսքը մասնաւորի մը ուղղելու (առանց
անապարանքի, վանկերն անդամաւելով).
— Ալօ՛, հո՛ս, Քրանսական Մօսքականեմ
նաւը . . . Ալօ՛, հո՛ս, Քրանսական Մօս-
քականեմ նաւը . . . Ալօ՛, հո՛ս, Քրան-
սական Մօսքականեմ նաւը . . .

Բ. ԶԱՅՆ, անդեմ (առանց անապար-
անքի, վանկերն անդամաւելով). — Ալօ՛,
նաւապետը ծովառաքածից Մաօրի նաւը
կը լսէ ձեր կոչը: Ձեր դիրքը որոշեցէ՛ք:

Ա. ԶԱՅՆ (հազիւ քիչ մ'աւելի արագ,
բայց միշտ անդեմ). — Կը կարծենք թէ
մեր դիրքն է Պրօպալ հրուանդանին Հար.
արեւմտ. կողմը 40 մղոնի վրայ, թեթեւ
մը դէպ ի Արեւելք խոտորած: Մեր նաւը
անշարժութեան դատապարտուած է . . .
նաւը կ'այլի . . . արագ կը ծաւալի:

Բ. ԶԱՅՆ. (սակաւին պաշտօնական).
— Ձեզմէ տար մղոն հեռու կը գտնուիմ
դէպ ի Հիւսիս և ձեր օգնութեանը կը
փութամ: Դէպքերուն ընթացքը շարուն-
ակաբար իմացուցէ՛ք ինձ:

Ա. ԶԱՅՆ (քիչ մ'աւելի փութով). —
Խնդրեմ, շտապեցէ՛ք. — Հրդեհը կը ծա-
ւալի և պայթուցիկ նիւթեր ունինք նաւ-
ուն մէջ. — Մեր միջոցներով անկարելի
է մեզ ազդուապէս մաքաւիլ. — Եթէ կը
հեռաձայնենք, պատճառն այն է որ մեր
անթիւ հեռագրի գործիքները չեն բանիր.
— Մեզի պատասխանող միակ նաւն էք:

Բ. ԶԱՅՆ (փաշալեռոյ շեշտով մը). —
Տակաւ կ'աւելցնեմ նաւուն ընթացքը մինչ-
չեւ առաւելագոյն երեսուն հանգոյց արա-
գութիւն: — Կը յուսամ քսան վայրկեա-
նէն ձեր քովը ըլլալ:

Ա. ԶԱՅՆ. — Ձեր պատասխանը նաւ-
ապետին կը հաղորդեմ ձայնատարով:

Գ. ԶԱՅՆ (մեղմ եւ ուր միջոյ պիտի
լուի). — Ալօ՛, նաւապետ . . . Քրանս-
ական Մաօրի ծովառաքածից լսեց մեր
կոչը և դէպ ի մեզ կուգայ արագ. — Կը
յուսայ քսան վայրկեանէ առաջ հոս գըտ-
նուիլ:

(Քանի մը երկվայրկեան ընդհատում)

Ա. ԶԱՅՆ (ուժով). — Նաւապետը
տեղեկացաւ. — Կը պատասխանէ թէ ան-

միջապէս պիտի գայ՝ ձեզի հետ խօսելու:
Բ. ԶԱՅՆ. — Հասկացայ. — Հիմա քսան
հանգոյց կ'երթանք: Քանի մը վայրկեա-
նէն քսան և հինգի պիտի հասցնենք ա-
րագութիւնը:

Ա. ԶԱՅՆ (պաշտօնական). — Ահա ա-
սիկ նաւապետը, գործիքը անոր կու-
տամ . . .

Դ. ԶԱՅՆ (բարեկիրք շեշտով մը, քիչ
մը մտաւոր եւ փութիւն). — Ալօ՛, Մաօ-
րի . . . Ալօ՛ . . . զիս կը լսէ՞ք . . . Հոս,
նաւապետ Քէրօթը, Մօսքականեմ նաւէն:

Ե. ԶԱՅՆ (սրեւտով). — Հոս, Մաօ-
րիի նաւապետը:

Գ. ԶԱՅՆ (միշտ մտաւոր). — Ձեր
դիրքին և ձեր շարժումներուն տեղեկա-
կամ. զմեզ դիւրաւ պիտի նշմարէք հե-
ռուէն. նաւուն ամբողջ առաջնամասը բո-
ցերու մէջ. ժամը 20 ին սկաւ հրդեհը.
կրակը արագօրէն հաղորդուեցաւ թիւ 1
լցարանին բռնկերուն: Թիւ 2 լցարանին
մէջ տար թօնօ պայթուցիկ նիւթ և սե-
վառօղ ունինք: Խիստ ճշմարտ մէջ ենք:
Ստիպուեցանք պարպիլ առաջնամասի
դարբնոցը: Օգտագործելի բոլոր ջրհան-
ները կ'աշխատին ողողելու լցարանները:

Ե. ԶԱՅՆ (փաշալեռի). — Հիմա ի վի-
ճակի եմ արագ օգնութիւն հասցնելու
ձեզ: Մեքենայներս քսան և ութ հան-
գոյցի համար կը դառնան. Երեսունի պի-
տի բարձրացնեմ և պիտի ջանամ քիչ մը
ալ անդին անցնիլ: Ամէն երեսուն երկ-
վայրկեանը անգամ մը կարմիր հրթիռ մը
պիտի արձակեմ: Քաջութիւն . . . Կը
հասնինք:

Դ. ԶԱՅՆ. — Մեր քաջութիւնը պի-
տի պահենք, ո՛րչափ որ կարենանք:

Ե. ԶԱՅՆ (արագ). — Ազատարարու-
թեան ինչ միջոցներ ունիք: Նաւուն մէջ
քանի՞ մարդ էք, նաւազ և ճամբարդ:

Գ. ԶԱՅՆ (յարանուն անհանգստ-
ւոր մը զգալի լինելով). — Ունիմ ութ-
սուն նաւազ, հարիւր վաթսուն ճամբարդ,
որոց քսանը կ'են և տասն և չորսը աղայ . . .
յետոյ, ինչ որ ամենէն աւելի մտահոգու-
թիւն կը պատճառէ ինձ, միջնայարկին մէջ
կան չորս հարիւր խիստ անհանգստ ու-
ղեւորներ, որոնք զաղթավայրերը աշ-
խատելու կ'երթան: Նաւակները պատ-
րաստել տուի, բայց կը վարանիմ հրա-
մայիլ որ ծով իջուցուին, վախճալով որ
սարսփեմ և տակնուվրայութիւն չառաջ կը
բերեմ: Այսչափ մարդու համար միջոց-
ներս անբաւական են: Աջակողմի երեք
նաւակներ և չորս լաստեր բռնկած ըլլա-
լով, բանի մը չեն ծառայիր:

Ե. ԶԱՅՆ. — Չորս ստանա՞յ . . .
Մաօրիի ազատարարութեան միջոցները
բաւական տկար են. երկու կիտորանաւ,
երկու եռ-եռ, մէկ պեռօն. — Առա-
ջին վայրկեանէն, անթիւ հեռագրով Կրդ
նաւարածի Գանակ և Թուզուլէօր նաւե-
րուն, որոնք ինձմէ քսանի մը մղոն հե-

ռուն կը գտնուէին, հրամայեցի տեղ ոյն
վրայ ամենայն արագութեամբ միանալ
ինձ: Այնոնք ալ ամէն երեսուն երկվայր-
կեանը անգամ մը հրթիռ պիտի արձա-
կեն . . . առաջինը ձերմակ, երկրորդը՝
կանաչ:

Դ. ԶԱՅՆ. — Գործիքը կը թողում,
նաւուն ծածքը երեւելու համար . . . Փոր-
ձագէտս իր գործին զուգար պիտի կենայ,
ինչ ալ պատահի, և զձեզ տեղեկ պիտի
պահէ դէպքերու ընթացքին: Շնորհակա-
լութիւն, նաւապետ, բրէք ինչ որ կըր-
նաք: Հոս, մենք մեր պարտքը պիտի
կատարենք, անհոգ եղէք:

(Լուռքիւն)

Ա. ԶԱՅՆ (վիշտով). — Ալօ՛ . . . Մօս-
քականեմի փորձագէտը:

Բ. ԶԱՅՆ. — Հոս, Մաօրիի փորձա-
գէտը . . . Նրբակամութիւն վրայ հսկող
պահակը մեծ լոյս մը տեսած է Հարաւի
կողմը: Դէպ ի այդ լոյսը կ'ընթանանք . . .
երեսուն հանգոյցով: Աւելի պիտի արա-
գացնենք: Մեքենավարը կը վստահացնէ:

Ա. ԶԱՅՆ (քիչ մը ընդհատ). — Նա-
ւապետը կ'իմացնէ ձեզ որ թիւ 1 և 2
լցարաններուն միջնորմը տաքնալ կը
սխալ. — Ներկը կ'ուռնեայ եւ տախտա-
կամածները կը սեւնան. — Թրջած առա-
կատներով կըցածնուա չափ ծածկեցինք՝
հրդեհին ծաւալումը ուղացնելու համար.
— Պայթուցիկ նիւթերը դուրս կը հանեն.
բայց պէտք է ծածքին վրայ հանել զա-
նոնք՝ ծով թափելու համար, և անուղի-
ները շատ ծանր ըլլալով, ձեռքով չեն
տարուիր. — Պէտք է բռնակալայցմը գոր-
ծածել, և գործողութիւնը վստահաւոր
է, վստահ չտեմարանին կափարիչը բո-
ցերով գրեթէ չըջապատուած է արդէն.

— Զրհաններն այլևս չեն գործեր:

(Կարճ լուռքիւն մը)

Բ. ԶԱՅՆ. — Ալօ՛, Գանակ և Թու-
զուլէօր անթիւ հեռագրով մի և նոյն ժա-
մանակ կ'իմացնեն թէ կը տեսնեն զձեզ:

Ա. ԶԱՅՆ. — Պահակը հիւսիսային
կողմը կը տեսնէ կարմիր հրթիռներ, և
Հիւս. Արեւելք կողմը՝ կանաչ հրթիռներ.
— Ահապարեցէ՛ք. — Կաջութիւնը գրեթէ
յուսահատական սկսած է ըլլալ:

Բ. ԶԱՅՆ. — Խիստ որոշ կը տեսնենք
բոցեր և մարդկային ստուերներ: Տար
վայրկեանէն ձեր քովը պիտի ըլլանք:

(Կարճ լուռքիւն)

Ա. ԶԱՅՆ (ամեն մէկ լուռքի յետոյ ա-
ւելի կամ ցուազ երկայն լուռքիւն մը
պահելով). — Նաւապետը ուղեւորները
դուրս հանելու հրամանը տուաւ. — Կո-
հակները նաւուն կողմին կը բաղխին ուժ-
գին. — Սառնիկ կը տատանի նաւը. —
Երկու վայրկեանէն ի վեր, պայթուցիկնե-
րու փոխադրութիւնն անկարելի եղած է
բոցերուն պատճառաւ . . . Աղէ՛տք . . .
Ծածքին վրայ կը պտտան . . . ամէն բան
կատարեալ է . . . տարձանակ մը որ կը

Եր հայրգափորձեց, մինչևի սկստանի ԼԾ... ԿԼԼ ԴԾԼ

[illegible]

— 63 —

Հիշա՛ւ ռադչւ՛ն՝ հը՛ ճ փշտմո՛մ • Ժ-ան թ-ճ՛ մտիտժեռեռժ
Իսեռա՛ն եսը՛ իտիվդեռն՛ ռաթլլ յառ՛մ • ղ,սմոսկ —

Երոթմկ ոզմման մա թՀնաթլ՛ ԵրդՀեռեռի՛ ռլի թՀնաթլ՛
փտո՛ւլ յառ՛մ Երդմեռեռեռի՛ ստե՛ Բաթլ՛ սեռառեռն • ռոմ հ
վլդառ ղՀփառ՛ ռդթվթլ՛ Երեռեռ ռոմ դ Երդլիմի՛մի ղեռի
ռոմ ռդ • հ-առ՛ մի մդլթմոմ հթլ՛ Երդմեռի՛ փտո՛ւլ • «Զդլ՛
ԺՀնդմդլ» • փոմ եռ մդյոռչ՛ ռառլգլմ՛ ժյոթաթլ՛ն դ Դլմ՛՛
ժյոթաթլ՛ն մա թՀնառառառչ՛ • մոդառն մի մդվթոթմիթլմո՛
մկ Բառլմ ղՀդյոթմեռն ղլի՛թմ մա ղեռ • մոթլլ յառնլդոս
մա Կոթդլոսեռլդ,ս եզլոթմոթառեռն • ԺՀնառառառչ՛ —

Եւսմտեռն ՝ ժոշ Լիկիշմկ, մտ • Խ Ժաւն • մզկիզմ
 ՝ մտտի ինն մզջ ժցնդեկնով Եւսգրամտի ոշնդմադ աղջ
 վեղդ ճ վիզմպոյ Եւսնմադ պշտոյ ՝ Ժվնդով մկտիտով Խնտմզի
 մզտոյ մը չվթ աղջ վեղդ մտտեռն Լիկիշմկ, մտ • Խ Եւսմա
 տում չթվ ժցնդմտի մկ Եւսմտտտտտտտտ Եւսվիտմմտտտ չով տտ
 Եւսրտմ մի չթվ ժցնդմտի ըզ ՝ «Եւս ժցնդմպոյ» • Ժ, Եւսմկ Եւ
 Ժվաւդմտեռն մկ ըզվ Եւսիտտտտտտտտ տտ Եւստտտտ ոշն վթ
 Եւստտտտտ Եւսվիտտտտտտտտ Եւստտտ ՝ Ժցնդմտտտտտ, Կ —
 Եւսնդի Կ Եւսնպտտտ մտտտ նդպտմ մը Եւստտտտ չթտիմպ
 մպ ՝ մճ մպթվ մտի Եւստտտտտտտ պթտտտ չթվ Եւստտ

ՀԱՅԿԱՆ ԴԱՐԱՆԻ ՆԵՐՈՒՆԱԾ

— 58 —

— Ի՞նչ թեթևամիտ եմ և սպուռ: Այն քաջ և զրթ-
բաղդ Աթոռն վերաւորուած էր ուսնէ , որուն զարկի
գլուխս խոյի մը պէս: Կը զարմանաւ թէ ի՞նչպէս տեղն

Բայց փողոցին զուար՝ Բորթոս պահապան զինուորի մը հետ կը խօսէր։ Երկու խօսակիցներու մէջտեղ ճիշդ մարդ մ'անցնելու չափ միջոց կար։ ՏՄարդանեան կարծեց թէ այն միջոցը բաւական էր, և նետի պէս անտնց մէջէն անցնելով հեռացաւ։ Բայց տ՛Արդանեան հովը հաշուի չէր առած։ Այն միջոցին իսկ որ պիտի անցնէր, համբար Բորթոսի ետեւը մկրտեալն ուսկետեւ, և տ՛Ար-

փայտատակէ . . . — Կը ծեծկուին պաշտօնակալներէ և նաւագներէ պաշտպանութեամբ մակոյկներու շուրջ. — Գաղթականները կը փողոտեն երաշխաւորները . . . Մէկ, երկու, երեք նաւակներ ծովուն վրայ խուճապ: Նաւակներէն երկուքը ծովմոյն կ'ըլլան. — Մէկը յորձանքէ կը քշուի. — Կիններն ու աղայք նաւակները կ'ըջնեն երկրորդ նաւակաւորն պաշտպանութեան ներքեւ. — Նաւակին մէկը հովէն քուցաւ, կը տատանի, կը հետանայ. գոնէ անոնք պիտի փրկուին. աշխատեցէք ձեր նաւն առնելու զանոնք. . . — Ուրիշ երեք նաւակներ ալ կը հետանան նաւէն . . . Ետեւ ծածրին վրայ, կոտարեալ խառնաշփոթութիւն. — Գաղթականները զոտ կուտան դէպ ի նաւակները. — Կարելի չէ որ ամէնքը սղմին, կը ծեծկուին, զիրար կը սպանեն:

Բ. ՉԱՅՆ (յուզաւաճ). — Կը բաւ. ձեր կեանքը փրկեցէք. թերեւ տակաւին կըրնաք փրկուիլ:

Ա. ՉԱՅՆ (հանգուս). — Հրամայուած է ինձ գործիքէս չը բաժնուիլ. — Պաշտօնիս վրայ կը մնամ. — Նաւակաւորն ինքն ալ նաւուն մէջ է. — Չայնատարին զեկավարը քովս է, և նաւակաւոր կընայ տակաւին պէտք ունենայ մեզ. — Այո՛, — Պահակը իմաց կուտայ թէ ամէն յոյս կորսուած է: Նաւուն մէջ այլ ևս նաւակ չէ մնացած: Ամէնքը ծովուն վրայ են կամ քանդուած. — Կրակը կը յատաճանայ . . . Միջնորդը տեղի կուտայ. — Տախտակաւորները կը բռնկին:

Ետեւ կողմը, տակաւին առ նաւակն հինգ թօնօ պայթուցիկ նիւթ կայ. — Ապահովաբար ականաւորն պիտի ըլլաք նշանաւոր հրախաղի մը:

Բ. ՉԱՅՆ. — Քաջութիւն, հաստատ կեցէ՛ք. Ահա՛ կուգանք. Ձեզմէ երկու մը զոն հեռու ենք . . . Կը տեսնենք զձեզ ու լռակի . . . Մահաւանդ մի՛ յուսահատիք: Պիտի ազատենք զձեզ, ապահով եղիք:

Ա. ՉԱՅՆ. — Շատ ուշ: Ատեն ատեն յիւնցէք զմեզ, երբ հայրենիք վերադառնաք. — Նաւակներուն մէջ զանուղները ազատեցէ՛ք: — Ահաւասիկ պայթուցիկներու լցարանէն ելնող բոցերը. — Մտքը բարով ձեր ամէնուն, — կորսուած ենք, — Ամէն պարագայի մէջ, շնորհակալութիւն: (Լուրբիւն): Ոչ տակաւին:

Փանի մ'երկվայրիկան լուրբիւն, յետոյ Բ. ՉԱՅՆ (սագնապաւ). — Այո՛ . . . Այո՛ . . . Մօսքականէմ. Այո՛ . . . — Տակաւին կը լսէ՞ք զիս:

Ա. ՉԱՅՆ (սկսէ ձայնով որսաբեկ). — Այո՛, Մօսքի. — Ահա՛ . . . մոխր՛ . . . կը խեղդուիմ. — Բոցերը կը ծաւալին. — Ամէն բան քանդուած. Ձիս կը լսէ՞ք, Մօսքի. — Ահ, վիրաւորուեցայ. — Կատարեալ փրկուած. — Դեկավարը քովս մնած:

Բ. ՉԱՅՆ. — Ուրեմն ազատէ ինքզինքդ, քանի որ սղջ ես:

Ա. ՉԱՅՆ. — Անկարելի. Մէկ ոտքս կտրեցաւ. — Գետին ինկած եմ. . . — Ձեմ կընար շարժիլ. — Ամէն բան կատարեալ է, նաւը գլխովայր պիտի երթայ. — Պզտիկ պատուհանէն ջուրը կը տեսնեմ. — Ծովը . . . կը մօնէ . . . գոռնէն. — Վրաս է. — Ծովուն տակը կ'երթանք . . .

Թրգմ. Յ. Գ. Փ.

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Տնտես. Խորհուրդը, պիւտճի պատրաստութեան առթիւ, ջնջած է Գոթաւ կատարութեան պաշտօնը, նկատելով որ այդ գործը սահմանափակ է և արդէն կը կատարուի վարչութեան Ատենապետին կողմանէ: Գործակաւոր Ազնիւ Էֆէնտի Տէր Ահարոնեանի ուրիշ պաշտօն յանձնուելու է կամ պիտի յանձնուի ամսականի կրճատումով: — Խոշ պաշտօն է արգիւտ յանձնուածը կամ յանձնուելիքը: Այդ պաշտօնին պաշտօնական չը կա՞ր արդէն Պատրիարքարանի մէջ: Զրկա՛յ թէ նոր պաշտօն կ'ուզեն ստեղծել՝ մարդ ապրեցնելու համար: Ահարջ տեղապահական շօջանին Ազնիւ Էֆէնտին ապրեցուցին Գործակաւոր անունով, ասանց որ այդ պաշտօնը իրապէս գոյութիւն ունի. նոր: Հեմա կը մտածուի՝ երեւի՝ ասան մըն ալ ուրիշ անունով ապրեցնել, և ասոր համար՝ երեւի՝ նոր պաշտօն էր պիտի հնարուի: Տնտես. Խորհուրդն այսպէս՝ կը հասկնայ Ազգին գրամներուն տնտեսութիւնը:

Տնտես. Խորհուրդը որոշումներու կարգին մէջ կը կարգանք նաեւ թէ, Դիւանապետութեան պաշտօնը յանձնուած է փոխանորդ Սմբատ եպս. ի, որուն ամսականը 35 էն 70 ոսկիի բարձրացած է: Ուրեմն Դիւանապետ Միհրան Էֆ. Չուհաճեանի պաշտօնը ինչ կ'ըսէ: Միհրան Էֆէնտին պաշտօնազուրկ եղած է, թէ՛ երկու Դիւանապետի ամսական պիտի վճարէ Ազգը . . .

Տնտես. Խորհուրդը միևնոյն ատեն որոշեց է միակ յանձնակատարի մը ձեռքը կեդրոնացնել գաւառի եկեղեցապատկան հորիւրաւոր կալուածներն, որոնք հիմա մեծ մասով անհասկանալի ձևով կը մատակարարուին: Արդեօք «միակ յանձնակատար» ր «անհատ» մը ըլլալէ տարբեր բան մըն է, և ո՞վ պիտի ըլլայ արդեօք այդ բաղդաւոր «միակ յանձնակատար» ր: Զո՞վ ի նկատի ունի Տնտես. Խորհուրդը, կամ որո՞ւ վրայ կը դառնայ կոր խնդիրը: Հասկնա՞նք:

ՄԱՅՐԱՆՈՅԸ. — Կը յիշուի թէ Հիւանդանոցին մէջ ի վաղուց հաստատուած և Տօք. Արզումանի նուիրատուութիւն:

Ներով ճոխացած Մայրանոցը՝ Նապինեան կոչուելու համար Տեղապահ Տ. Գէորգ Ասլանեան, յատենի Հոգար սրճութեան Ժողովոյ խոստացած էր երեք հատ Անատոլոյի երկաթուղայ արժեթուղթ և 200 ոսկի նուիրել Հիւանդանոցին: Մեզ կը հաւատեն թէ Տ. Գէորգ Ա. ցարդ չէ զարծողա՞ծ իր խոստումներէն և ո՛չ միև, և Մայրանոցի նորագութեան և կահաւորման բոլոր ծախքերը Հոգարսրճութեան մատուկէն վճարուած է, հակառակ անոր որ ինքը վճարել խոստացած էր: Ուրեմն վա՛ր առնուի Նապինեան անունը կրող նշանատախտակը:

ՄԵՂՈՒ, Ե ԻՆՉ ԿՐՆԷ

«ՄԵՂՈՒ»ն մեկ քանի շաբաթ ի վեր, Օդին մէջ պարզած իր գոյց մը բերեւ, ձախաւններ կ'ընէ մեկ աջ ու մեկ ձախ, Մերք արտադրելով մեղրի սնկ քաջալի:

Այդ քաջալը բարեւ, ո՞վ մարդիկներ հե՛ք, Զրկա՛յ ու երբեք դուք արհամարհե՛ք, Զի ան շինիչ ցիւք մ'ե բասմոխի, Թե ողբաւորիւն ձեզմէ կը պատսի:

Ան ձեռք բռնած մեկ բիւրս գաւազան, Ի կարգ կը բերէ մարդը կուռազան, Ու Լեք անուղղայ կը մնայ դեռ ան, «ՄԵՂՈՒ»ն կը բանա՛յ իր օրհնեալ բերան:

Բայց, լեզու՛յ, չըլլա՛յ ան օր մը պիծակ, Անրգայ մարդիկն ընելու ծակ ծակ, Զի խեղի բեռովն այս կարգի մարդոց, Ե լոկ «ՄԵՂՈՒ» ին արածայր խալոց: ԾԵՐՈՒԿԸ

ՈՏԱՑԱՆԵՐ

Նոր Շէն. (վերածնած իշա քար). 1924 1930: Գրեց Սեդուհ: Տպուած ի Նիւ Եորք: Հրատարակիչ՝ Հայ Կրթական Հիմնարկութիւն, որուն հասցէն կը պակսի գրքին վրայ կամ մէջը: Գիրքը նուիրուած է վաղամեռիկ Կարապետ Հաուրրո Գաւաթեօղեանի յիշատակին: Էջ 174: Պատահականութեանը մասին պիտի խօսինք՝ գիրքն ամբողջութեամբ կարգաւէ յետոյ: Նիշէվօ, Պօս Թրօզ ձայնագրեալ պարք. յօրինուած՝ ծանօթ ջութակահար Ահարոն Էֆ. Մարեանէ:

ՄԵՂՈՒԻ Գատարելով բաժանորդներէն կը խնդրուի իրենց բաժնեգիրք յանձնել Օր. Արմենուհի Ֆէրհատեանի, Հաճի Շիւքրի փողոց, Ժիւ 36, Այս. Թրիանտա Եւանայ Եկեղեցիին գլխաց:

ՖԵՐԻ ԳԻՂԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ

ԱՌԹԻՒ

Ուր. օր Ֆերի գիւղի մէջ Թաղ. Խորհրդի ընտրութիւն կատարուեցաւ: Թէէ 1230 քուէնամակ բաժնուած էր, բայց միայն 382 թաղեցի մասնակցեցան քուէարկութեան, 317 նամակով, 65 անձամբ: Մաս մը Թաղեցիներ օգտւորութեան պատճառաւ կը բացակայէին. անտարբերներ չէին մասնակցած՝ իրենց վաղեմի բարի սովորութեան համեմատ. նամակ չընդունողներ ալ զանուած են որոնք իրենց իրաւունքն ի գործ դնելու հետամուտ չեն հղած և գիմում չեն բրած՝ նամակ պահանջելու համար: Ֆերի գիւղի մէջ այս այսպէս եղած է ամէն ընտրութիւններու առթիւ: Ընտրութիւնը տեղի ունեցաւ կատարեալ հանգարտութեամբ, և քուէից բացարձակ առաւելութեամբ՝ եռապատիկ ընտրելեաց ցանկէն ընտրուեցան Տեարք՝

Աբրահամ Էֆեան	քուէ 304
Գառնիկ Վարժապետեան	» 278
Մկրտիչ Պարսիգլանեան	» 272
Յակոբ Չնարեան	» 266

Իսկ եռապատիկ ցանկին մէջ չը գրանուող թաղեցիներէն ալ դարձեալ քուէից բացարձակ առաւելութեամբ ընտրուեցան՝

Յովնան Փալագաբեան	քուէ 206
Աւսեանակ Չալուհեան	» 204

Եօթներորդ անգամի ընտրութիւնը կը մնար համեմատականի: Բայց մեր լսածին համեմատ, Ընտր. Ժողովը նկատելով որ վարժարանին վերաբացման թուականը խիստ մօտ է, նոր ընտրութեամբ մը ժամավաճառ չըլլալու, միանգամայն նոր ծախքերու չենթարկելու համար Մատուկը, զանց բրած է 7րդ անգամի մը ընտրութիւնը, միւս կողմանէ՝ թաղականներու վեց թիւն ալ բաւ համարելով թաղին մատակարարական գործին համար, և որոշած է ըստ այսմ տեղեկագրել Վարչութեան:

Ըսինք թէ ընտրութիւնը տեղի ունեցաւ կատարեալ հանգարտութեամբ: Ասոր ալ պատճառն այն էր որ, Տեղապահական բոյնը միանգամ ընդ միշտ քանդուած էր և մէկ երկու արբանեակներ էին միայն որ ուղեցին

խլրալ և ստորին խաղերով փորձեցին եկեղեցին պարտքի տակ ձգող Տեղապահական շրջանի օժախին նման նոր օժախ մը ստեղծել. բայց իրենց բոլոր ջանքերն՝ թաղեցիին մէկ քանի ընտրելիները ընտրելիներու ցանկէն դուրս ձգել տալու յաջողութենէն անդին չի կրցան անցնիլ: Հակառակ սակայն ի գործ դրուած այս և այսպիսի ստոր մեքենայութեանց, որոց հեղինակներն և կատարած գերերն քաջ ծանօթ են մեզ, ընտրող թաղեցիին գիտցաւ ընելիքն՝ և ստուար մեծամասնութեամբ ցանկէն դուրս ընտրեց ճիշդ այն անձերն որոնց գէտ խուլ պայքար բացուած էր, որպէս զի չընտրուին անոնք, և իրենք կարենան կազմել անհատական շահերու ծառայող նոր օժախ մը:

* * *

Ֆերի գիւղի ազգային գործերու շրջանակը լուրջ մաքրագործումի կը կարօտէր շատոնց ի վեր: Կուրտիկեան Ստեփան Էֆէնտիի առեւտրային տնտեսութեամբ գործող Թաղ. Խորհուրդը կէս մաքրագործում մը ի գործ դրաւ իր պաշտօնավարութեան կարծ շրջանին մէջ, միանգամայն վճարելով Տեղապահական շրջանի Թաղ. Խորհուրդին ձգած 1900 ոսկի պարտքէն 1500 ոսկիի չափ գումար մը: Այնուհետեւ եկող Առժմ. Խորհուրդը բնականաբար հիմնական որ և է կարգադրութիւն չէր կրնար ընել: Խորհրդատիւ Խորհուրդին վրայ պարտք կը ծանրանայ, հին աղտոտութիւնները հիմնովին մաքրելով՝ կարգ կանոն հաստատել եկեղեցական, դպրոցական և մատակարարական գործերու մէջ: Թաղին աղքատներու հոգածութիւնն ալ Խորհուրդին պարտականութիւններուն մասը կը կազմէ: Չորս կարեւոր խնդիրներ, Խորհուրդին մասնաւոր մտադրութեանն արժանի՝ չորսն ալ: Եկեղեցին պէտք է բարեկարգուի իրեն գրաւելու համար Ժողովուրդը. դպրոցը պէտք է բարեկարգուի և թաղին իրական պէտքերը գոհացնելու վիճակին մէջ գրուի. մատակարարական գործը պէտք է կանոնաւորուի, հասցիները պէտք է արդիւնաւորուին, աւելորդ մասխուռներ չըլլան, և կղերական շահատակութիւնը եւ չարաշահութիւնը

պէտք է վերջ գտնեն: Մանաւանդ կը թաւանս գործը պէտք է Խորհուրդին լուրջ ուշադրութեանն առարկայ ըլլայ: Վարժարանին տեղը շատ անյարմար է, քաշուած անկիւն մը դրեթէ. պէտք է կեդրոն տեղ մը փոխադրել զայն, որպէս զի այս ընդարձակ և ցրուած թաղին (Ֆերիքէօյ, Սինէմքէօյ, Շիշլի, Բանկալդի, Նշան թաղ) ամէն կողմէն տղայք գիւրուութեամբ կարենան երթիկել: Միանգամայն պէտք է բարձրացնել վարժարանին մակարդակը, որպէս զի ծնողք ստիպուած չըլլան հեռաւոր թաղեր զրկել իրենց զաւակները կամ օտար հաստատութիւններու յանձնել:

Չենք յուսար որ այս ամէնն իրագործելու համար բարի կամեցողութիւնը պիտի պակսի նորընտիր Խորհուրդին: Կը հաւատանք ընդհանրապէս որ բոլոր այս խնդիրներ իրենց արժանի կարեւորութեամբ նկատի պիտի առնուին առաջին օրէն իսկ, և թաղեցիին ալ գործնականապէս և սխալ յօժար իր աջակցութիւնն ու քաջակերութիւնը պիտի բնաւ թորհուրդին բոլոր բարի մտադրութեանց և առաջադրութեանց: Աւելորդ է ըսել թէ. թաղականին և թաղեցիին փոխադարձ սէրն ու համակրութիւնն կարող է ամենէն գոյաւոր նկատուած ծրագիրներու իսկ գործադրութիւնը իրաւացնել, որկէ կ'օգտուի թաղը, այսինքն կ'օգտուի եկեղեցին, կ'օգտուի վարժարանը, կ'օգտուի թաղին աղքատիկ դասակարգը, ինչ որ հաշաւարապէս ամէնուն կէտն պատակին պէտք է ըլլայ, առանց որ և է կարեւորութիւն ընծայելու անհամ և անիմաստ բարբառանքներուն և սնոտի խօսքերուն համբաւներուն, որոնք տարիներէ ի վեր գրելու վարժութիւն կ'ընեն և այդ մարդին մէջ տակաւին այլ բնական զիմէն անդին չեն կրցած անցնիլ, շատ առիթներով իրենց առած խիստ դասերուն հակառակ:

Բ. Չ. Ս.

ՇԱԲԹՈՒԱՆ ՕՐԱՑՈՅՑԸ

ՕԳՈՍՏ. 18 — 24

18	Եռ. Ե. օր	Վերափոխման.
19	Ուր. Պահք:	
20	Շբ. Է. օր	»
21	Կիր. Բ. օր	»
22	Բե. Թ. օր	» Հաւասնիք:
23	Գե. Յովակ. եւ Աննայի եւ կան. իւր.	
24	Դե. Պահք.	

ՏՊԱԳՐ 3. Գ. ՓԱՆԱԳԱՆԵՄՆ